ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՒՐԸ

Անցած տարի լրացավ հայ նշանավոր պատմաբան, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Համո Ավետիսի Հարությունյանի ծննդյան 95-ամյակը: Հ.Հարությունյանը (1906 - 1981) ծնվել է Վանի նահանգի Լամզկերտ գյուղում: 1933թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Գիտամանկավարժական գործունեության մոտ 50 տարիների ընթացքում նա հայոց պատմություն է դասավանդել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Լենինականի մանկավարժական ինստիտուտներում, Երևանի պետական համալսարանում և Էջմիածնի Հոգևոր ճեմարանում: Լինելով Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հիմնադիր անդամներից մեկը՝ այստեղ 15 տարի վարել է պատմության ֆակուլտետի առաջին դեկանի և 21 տարի՝ հայ ժողովրդի պատմության ամբիոնի առաջին վարիչի պարտականությունները: Միաժամանակ, աշխատել է ՀԽՍՀ լուսժողկոմատին կից Պատմության և գրականության, ապա Արմֆանին կից Պատմության և նյութական մշակույթի պատմության ինստիտուտում՝ որպես գիտական աստիճաններ շնորհող առաջին մասնագիտացված խորհրդի գիտական քարտուղար և տնօրենի տեղակալ: Նա եղել է «Գիտելիք» ընկերության հիմնադիր անդամներից մեկը և Ժողկոմխորհին կից հայկական հին ձեռագրերի հրատարակման հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը: Հ.Հարությունյանը զբաղվել է Հայաստանի հին, միջնադարյան և նոր ժամանակների պատմությամբ: Նա հեղինակ է մի քանի տասնյակի հասնող գիտական ուսումնասիրությունների, որոնք վերաբերում են հայ ժողովրդի պատմության կարևորագույն խնդիրներին: Հ.Հարությունյանը խորհրդային շրջանում հայոց պատմության բուհական առաջին ծրագրի և հայոց պատմության դպրոցական առաջին դասագրքի հեղինակն է: Մինչև օրս էլ նրա անձնական արխիվում պահվում են դեռևս չհրատարակված (մոտ 200 մամուլ) մի շարք աշխատությունների և հոդվածների ձեռագրեր:

Համո Հարությունյանի պատմագիտական ունակությունները շատ բարձր են գնահատել ժամանակի ականավոր հայագետներ Հ.Աճառյանը, Հ.Մանանդյանը, Խ.Սամվելյանը, Հ. Օրբելին և ուրիշներ, որոնք նրան անվանել են գիտության իսկական մշակ: Ունենալով մեղվաջան աշխատասիրություն և դերձ լինելով դասակարգային պատրանքներից՝ նա աչքի էր ընկնում հայոց պատմության խորը և բազմակողմանի իմացությամբ և շատերին նպատակամղում զբաղվելու հայ ժողովրդի հիասքանչ ու հերոսական պատմության հարցերով: Մինչև հետպատերազմյան տարիները, երբ արգելված էր Հայոց պատմությունն առարկայի դասավանդումը ինչպես դպրոցում, այնպես էլ բուհերում, նա եղավ այդ առարկայի առաջին դասավանդողներից և տարածողներից մեկը: Հ.Հարությունյանը եղել է հանրապետության լավագույն մանկավարժ-պատմաբաններից, հայ ժողովրդի

պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանի ճանաչված և նշանավոր մասնագետներից մեկը: Մեծ է նրա վաստակը երիտասարդ մասնագետների պատրաստման բնագավառում: Նա ունեցել է բազմաթիվ ասպիրանտներ. պատրաստել է շատ մասնագետներ հայագիտության բնագավառում. շատերին է օգնել դառնալու գիտության թեկնածուներ, դոկտորներ և ակադեմիկոսներ: Այժմ էլ նրա սաները աշխատում են տնտեսության տարբեր ճյուղերում: Հ.Հարությունյանի գիտելիքները, հայ ժողովրդի պատմության փաստական տվյալների իմացությունը. պերճախոս դասախոսությունները, ժամանակագրական և կարևոր դեպքերը հիշողությամբ ամբողջովին վերարտադրելը զարմանք են պատճառել շատերին, այդ թվում և տողերիս հեղինակին: Ինչպես Հ.Շիրազն է նշել, «Նա հայ ժողովրդի պատմության հետաքրքրական դրվագները այնպես է ներկայացնում, որ կարծես ինքը ներկա ու ականատես է եղել այդ անցուդարձին և այդ պահին այնտեղից է ժամանել մեզ մոտ»:

Գիտամանկավարժական բեղմնավոր գործունեության համար նա պարգևատրվել է Պատվո նշան շքանշանով և Խ.Աբովյանի անվան մեդալով:

Ս.Մ.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ